«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 68/03-1

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 21.01.2022թ. ժամը 17:00

Համաձայն ՀՀ Արդարադատության նախարարությունից վերահասցեագրված և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝09.11.2021թ. ստացված փաստաբան Արկադյա Գևորգյանի 14.11.2021թ-ի թիվ 422353 դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով ՝քաղաքացի Վրեժ Սարգսյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հենրիկ Մարտիկյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների և ներկայցված առարկությունների վերաբերյալ եզրակացության գալու համար՝ ս/թ-ի Հունվարի 21-ին ժամը 17-00-ին՝ ք.Երևան, Արշակունյաց 5 հասցեում, հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի հռտաձգված նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձանժողովի անդամ՝ Արմեն Ադամյանը
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմինե Մովսիսյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Դիմումատու՝ քաղաքացի Վրեժ Սարգսյանի սնանկության գործով պարտատեր՝Գառնիկ Հովհաննիսյանի ներկայացուցիչ՝փաստաբան Արկադյա Գևորգյանը:
Քաղաքացի Վրեժ Սարգսյանի սնանկության գործով կառավարիչ՝Հենրիկ Մարտիկյանը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմեն Ադամյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյան
Հանձանժողովի անդամ՝ Արմինե Մովսիսյանը
Քաղաքացի Վրեժ Սարգսյանի սնանկության գործով կառավարիչ՝Հենրիկ Մարտիկյանը ներկայացրել էր նիստի համար անհրաժեշտ բացատրություններ և հիմնավորող փաստաթղթեր և հեռախոսազանգով տեղեկացրել է,նիստի ժամին այլ համնկնող դատական նիստի առկայության մասին և խնդրել է նիստը անցկացնել առանց իրեն,հայտնելով պատրաստակամություն անհրաժեշտության դեպքում ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր::

Դիմումատու՝ քաղաքացի Վրեժ Սարգսյանի սնանկության գործով պարտատեր՝Գառնիկ Հովհաննիսյան և ներկայացուցիչ՝փաստաբան Արկադյա Գևորգյանը պատշաճ ծանուցված էր նիստի տեղի և ժամի վերաբերյալ բայց իր ներկայությունը չեր ապահովվել::

ՕՐԱԿԱՐԿՈՒՄ՝
1. ՀՀ Արդարադատության նախարարությունից վերահասցեագրված և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝09.11.2021թ. ստացված փաստաբան Արկադյա Գևորգյանի 14.11.2021թ-ի թիվ 422353 դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով ՝քաղաքացի Վրեժ Սարգսյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հենրիկ Մարտիկյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, բողոքում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը և տեղեկացրեց նիստի մասնակիցների վերաբերյալ առ այն,որ դատական նիստի առկայության պատճառով կառավարիչը խնդրել է նիստը անցկացնել առանց իրեն,նախորոք ներկայացնելով հանձնաժողովին համապատասխան բացատրություն և կից փաստաթղթեր:Դիմումատու քաղաքացի Վրեժ Սարգսյանի սնանկության գործով պարտատեր՝Գառնիկ Հովհաննիսյանի ներկայացուցիչ՝փաստաբան Արկադյա Գևորգյանը գրավոր կարգով խնդրել էր 21.12.2021թ-ին նշանակված նիստը հետաձգել այլ հերթի,քանի որ ցանկանում են անպայման ներկա գտնվել նիստին և տալ համապատասխան պարզաբանումներ,բայց այս նշանակված նիստին չի ներկայացել:

Հանձնաժողովի նախագահն խնդրեց հանձնաժողովի ներկա անդամներից հայտնել կարծիքներ առանց դիմումատուի և կառավարչի նիստը շարունակելու վերաբերյալ, հայտնելով այն կարծիքը որ կառավարչի կողմից ներկայացվել է բացատրություններ-առարկություններ և համապատասխան փաստաթղթեր,որոնք իր կարծիքով հնարավորություն կտան ձևավորելու կարծիք եզրակացության գալու համար:

Հանձնաժողովի անդամ Ռ.Խալաթյանը հայտնեց այն կարծիքը,որ դիմումատուի ներկայացուցիչի խդրանքը նախորդ նիստով իրենց կողմից հարգվել է և նիստը հետաձգվել և նշանակվել է այսօր,բայց ներկայացուցչը իր ներկայությունը չի ապահովել,ուստի իր կարծիքով կարելի է ընդունել որ նա այլ բան չունի ավելացնելու կամ ներկայացնելու,իսկ կառավարչի կողմից ներկայացված բացատրությունները և փաստաթղթերի ուսումնասիրությունները կտան հնարավորություն փաստական հանգամանքների վերաբերյալ եզրակացության գալու:

Հանձնաժողովի մնացած անդամները համաձայնեցին այդ կարծիքի հետ և որոշեցին նիստը շարունակել առանց,սնանկության գործով կառավարչի և դիմումատուի ներկայության:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանի հանձնարարությամբ,հանձնաժողովի անդամ՝Ա.Մովսիսյանը հանձնաժողովի անդամներին ներկայացրեց ստացված գործի նյութերը,հակիրճ ներկայացնելով բողոքը մասնավորապես նշեց,որ բողոքում նշված փաստերով բողոքաբերը փորձել է ապացուցել կառավարչի անգործությունը ,մասնավորապես քաղաքացիական հայցով դատական նիստերին երկու անգամ չներկայանալը և պարտապանի համասեփականության իրավունքով գույքերի գրանցման և նրանց բաժանելիության պարզման և իրացման դաակաև հայցերի պատրաստման և իրականացման վերաբերկյալ պլանավորված աշխատանքների իրականցման վերաբերյալ տեղեկատվության չտրամադրումն է:

Նախագահ՝Տ.Հարությունյանը ներկայացրեց նաև ՀՀ Արդարադատության Նախարարության Վերահսկողական ծառայության պետի 29.11.2021թ-ի գրությունը,որով ծառայությունը ԻԿԿ-ին է վերահասցեյագրում դիմում-բողոքը և ներկայացնում է նաև բողոքին կից ներկայացված փաստաթղթերը:

Հանձնաժողովի անդամ՝Ռ.Խալաթյանը ներկայացրեց անդամներին կառավարչի բացատրությունները ևկից փաստաթղթերը,մասնավորապես շեշտելով,որ կառավաչը իր ներկայացվրած հայցադիմումով նշանակված դատական նիստերով չի ներկայացել առաջին նիստին այլ գործերով զբաղվածության պատճառով,իսկ երկրոդ նիստին արվա և ժամի սխալ նշման պատճառով,որի վերաբերյալ նա բացատրություններ է ներկայացրել ՀՀ Արդարադատության Նախարարություն ի պատասխան կողմի բողոքի:Բացի դրանից կառավարիչը նշել է,որ դրմումատուի կողմից դիմում նշված փաստական հանգամանքներով դիմումատուն բողոք է ներկայացրել դատարանին:Դատարանը քննարկել է դիմումը և իր 24.02.2021թ-ի որոշմամբ մերժել է այն,կառավարչի գործողությունները համարելով իրավաչափ:

Հանձնաժողովի նախագահն խնդրեց անդամներին կարծիքներ հայտնել :
Հանձանժողովի անդամ՝ Արմեն Ադամյանը հայտնեց այն կարծիքը,որ դիմումը կարդալուց ստանում ես այն տպավորությունը որ դիմումատուն անտեղյակության քողի տակ բողոքի տեսքով հրամցնում է փաստերին անծանոթ տարբեր իրավասու մարմիններին և փարձում է ստանալ ինչ որ որոշումներ որտեղ կառավարչի կամ պարտապանի համար կլինի անբարենպաստ որևէ կետ,որը հետագայում կոգտագործվի նրանց կողմից,որպես գործիք կամ շանտաժի միջոց,իրենց նպատակներին հասնելու համար, այս պարագայում այդպիսի մարմին է հանդիսանում ՀՀ Արդարադատության Նախարարությունը և ՍԳԿԿ ԻԿԿ-ն՝հանձինս Կարգապահական հանձնաժողովի:Հանձնաժողովի անդամի կարծիքով այն բոլոր փաստերը որոնք նշել է դիմումատուն,նա արդեն պատասխաններ ստացել է այլ մարմիններից՝ՀՀ Սնանկության դատարանից և ՀՀ Ոստիկանությունից և նրանք արդեն մանիպուլացնում են այդ պատասխանները իրար դեմ և ցանկություն ունեն նաև այդ մանիպուլյացաներին միացնել նաև Հանձնաժողովի եզրակացությունը,ԻԿԿ Որոշումը և Նախարարության դիրքորոշումը:
Հանձանժողովի անդամ՝ Արմինե Մովսիսյանը նշեց,որ ինքը համակարծիք է այդ կարծիքի հետ և ուսումնասիրելով նյութերը և լսելով կողմերի ներկայացրած փաստական հանգամանքները,ստանում է այն կարծիքը,որ կողմերը ամեն կերպ ցանկանում են իրար վնաս տալ, իսկ պարտատերը իր փաստաբանի հետ միասին այդ գործողությունները ցանկանում են կատարել կառավարչի միջոցով,ով գործելով օրենքի շրջանակներում չի տրվում կողմնակալության:Կողմի ներկայացուցիչը իր,տեղեկատվության ստացման վերաբերյալ դիմումների և դրանց տրամադրման դեպքում դրանցում առկա փաստերի իսկ չտրամադրման կամ ուշ տրամադրման դեպքում պատասխանի չտրամադրման փաստով,բողոքների միջոցով նպատակ է հետապնդում կառավարչին պահել մշտական լարվածության մեջ,որի հետևանքով էլ հերթական աշխատանքային բացթողման փաստով գրել հերթական դիմումը,որը ըստ էության սնանկության վարույթի վրա էական ազդեցություն չի ունեցել:

Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը նույնպես համաձայնելով արտահայտած կարծիքներին,անդրադարձավ այն փաստին որ հանձնաժողովի կողմից արդեն երրոդ բողոքն է լսվում այս նույն կողմերի միջև և ինչպես կառավարիչն է նշել կողմը նախկին եզրակացությունը օգտագործում է ամեն անգամ նշելով թե կառավարչին նախազգուշացրել են որեմն նա սխալ է եղել,իսկ ինքը ճիշտ և կառավարիչը ամեն ինչ պիտի անի այլ նախազգուշացումներ չստանալու համար:
Հանձնաժողովի նախագահն նշեց,որ այո ինքը կարող է համաձայնել,որ նիստերի տարբեր պատճառներով չներկայանալու արդյունքում,հայցը դատարանի կողմից թողնվել է առանց քննության,որ դա ընդհամենը տեխնիկական լուծվող խնդիր է,որ կառավարիչը արդեն այդ ահչցը լուծել է նոր հայցադիմով դատարան դիմելով,որը վերցվել է վարույթ և այժմ քննվում,ինքը կարող է ընդունել որ կառավարչի պատականությունները բացմաբնույթ լինելով շատ են,բայց ամեն դեպքում կառավարչի գործողությունները պետք է լինեն պլանավորված և նպատակաուղղված իր պարտականությունների կատարմանը:Նիստերին չներկայացնելը ըստ էության ազդեցություն չի ունեցել սնանկության վարույթի ընթացքի վրա, բայց դա իրավական ազդել է սնանկության վարույթի վրա ժամանակային առումով,այսինքն նաև մնացած պարտատերերի և կողմերի իրավունքների իրացման վրա,որպիսի գործողությունների հետագա բացառումների համար հաձնաժողովի նախագահն առաջարկեց սնանկության գործով կառավարիչ՝Հենրիկ Մարտիկյանին նախազգուշացնել,որ հետագայում իր գործողությունները լինեն ավելի պլանավորված և նպատակուղված իր պարտականությունների կատարմանը,որը կբացառի դատարաններում նշանակված նիստերին պարտապանի ներկայացուցչի ապահովման հետ կապված հարցերի բարձրացումը:
Հանձնաժողովի անդամները քննարկեցին դիմումում նշված հանգամանքները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը,բացատրությունները և արդյունքում քվերկեցին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Չեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՝
1. ՀՀ Արդարադատության նախարարությունից վերահասցեագրված և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 09.11.2021թ. ստացված փաստաբան Արկադյա Գևորգյանի 14.11.2021թ-ի թիվ 422353 դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով՝ քաղաքացի Վրեժ Սարգսյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հենրիկ Մարտիկյանի գործողությունների /անգործության/օրենքին և կանոնակարգերին համապատասխանության վերաբերյալ հարուցված վարույթի արդյունքներով՝ միջնորդել «ՍԳԿԿ» ԻԿԿ Դիտորդ խորհրդին «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 5 հոդվածի 5.1 կետի 5-րդ ենթակետի հիմքով՝ քաղաքացի Վրեժ Սարգսյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հենրիկ Մարտիկյանին նախազգուշացնել,որ հետագայում իր գործողությունները լինեն ավելի պլանավորված և նպատակուղված իր պարտականությունների կատարմանը,որը կբացառի դատարաններում նշանակված նիստերին սնանկության գործով կառավարչի ներկայության ապահովման հետ կապված հարցերի բարձրացումը:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝Ա.Մովսիսյան